ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 70 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսուն, աշխատանքի տեղավորման՝ երեսունյոթ, ապօրինի շինարարության, բնակարանի վերանորոգման և շենքի վերելակի կարգավորման մասին՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քսանմեկին տրվել է դրական լուծում, ինչը գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին երեսունյոթ դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրման ընթացքի մեջ են ապօրինի շինարարության, բնակարանի վերանորոգման և շենքի վերելակի կարգավորման մասին դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ